CONVERSE BANK	**«Կոնվերս Բանկ» ՓԲԸ**
	Ռեեստրավարման ծառայությունների միջնորդավորման սակագներ

Ուժի մեջ մտնելու ամսաթիվը	**12.08.2025թ.**

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

1. ՆՊԱՏԱԿ 1
2. ԿԻՐԱՌՄԱՆ ՈԼՈՐՏ 1
3. ԱՌՆՉՎՈՂ ՓԱՍՏԱԹՂԹԵՐ 1
4. ՍԱՀՄԱՆՈՒՄՆԵՐ ԵՎ ՀԱՊԱՎՈՒՄՆԵՐ 1
5. ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ 2
6. ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐ ..... **Error! Bookmark not defined.**
7. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ 2
8. «ԿՈՆՎԵՐՍ ԲԱՆԿ» ՓԲԸ ՄԻՋՆՈՐԴՈՒԹՅԱՄԲ ՌԵԵՍՏՐԻ ՎԱՐՄԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ ՍԱԿԱԳՆԵՐ 4

1. ՆՊԱՏԱԿ

««Կոնվերս Բանկ» ՓԲԸ Ռեեստրավարման ծառայությունների միջնորդավորման սակագների» /PL 74-08/ (այսուհետ՝ Սակագներ) նպատակն է սահմանել «Կոնվերս Բանկ» ՓԲԸ (այսուհետ՝ Բանկ) կողմից, որպես Հայաստանի Կենտրոնական դեպոզիտարիայի (այսուհետ՝ ՀԿԴ) հաշվի օպերատոր, ռեեստրավարման ծառայությունների միջնորդավորման և մատուցման սակագները:

2. ԿԻՐԱՌՄԱՆ ՈԼՈՐՏ

Սակագները կիրառվում են Մանրածախ բիզնեսի, Կորպորատիվ բանկային ծառայությունների, Ֆինանսական և Ներդրումային դեպարտամենտների կողմից:

3. ԱՌՆՉՎՈՂ ՓԱՍՏԱԹՂԹԵՐ

«Արժեթղթերի շուկայի մասին» ՀՀ օրենք

Հայաստանի կենտրոնական դեպոզիտարիայի «Արժեթղթերի հաշվառման և հաշվարկային միասնական համակարգի գործունեության կանոններ»

Հայաստանի կենտրոնական դեպոզիտարիայի «Սակագների մասին կանոններ»

ՀՀ ԿԲ «Արժեթղթերի կենտրոնացված ռեեստրավարման և պահառության կարգը» Կանոնակարգ 5/10

««Կոնվերս Բանկ» ՓԲԸ Ռեեստրավարման ծառայությունների մատուցման կարգ» /PR 74-08/

4. ՍԱՀՄԱՆՈՒՄՆԵՐ ԵՎ ՀԱՊԱՎՈՒՄՆԵՐ

Օրենք - «Արժեթղթերի շուկայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենք,

Սակագին - սույն սակագներով սահմանված ՀԿԴկողմից մատուցվող ծառայության դիմաց վճարման ենթակա գումարի չափ՝ արտահայտված համապատասխան ծառայության հիմնական չափորոշիչ ցուցանիշի նկատմամբ տոկոսով կամ ՀՀ դրամով:

Սակագներում կիրառվող այլ հասկացություններն ունեն Օրենքով և ՀԿԴ կանոններով սահմանված նշանակությունը:

5. ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ

6. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

6.1. Սակագների պահանջները կիրառվում են այն թողարկողների և այլ անձանց նկատմամբ, ովքեր օգտվում են «Կոնվերս Բանկ» ՓԲԸ միջնորդությամբ ռեեստրի վարման ծառայություններից:

6.2. Սակագներով սահմանված ծառայությունների դիմաց գանձումը իրականացվում է ՀՀ դրամով՝ Բանկի կողմից ծառայությունը մատուցելու պահին, բացառությամբ այն սակագների, որոնց գանձումը նախատեսվում է կատարել ամսական կտրվածքով:

6.3. Ամսական կտրվածքով սահմանված սակագների գանձումը կատարվում է օրացուցային ամսվա վերջին հաջորդող 5 /հինգ/ աշխատանքային օրվա ընթացքում: Ընդ որում՝ ռեեստրի վարման ծառայության մատուցման առաջին և վերջին ամսվա միջնորդավճարները գանձվում են ամսվա փաստացի օրերի հաշվարկով, իսկ Հաշվի Օպերատորի փոփոխության հետևանքով ռեեստրի վարման պայմանագրի վերակնքման դեպքում ռեեստրի վարման ծառայության մատուցման ընթացիկ ամսվա համար գանձվում է միջնորդավճարի հաշվարկված մեծությունը՝ համաձայն Սակագների՝ ներառելով Կենտրոնական դեպոզիտարիայի սակագինը ընթացիկ ամբողջ ամսվա համար:

6.4. Ոչ հաշվետեր հաճախորդ հանդիսացող թողարկողները, ռեեստրի վարման պայմանագրի կնքման օրը, համապատասխան հատուկ հաշիվներին ապահովում են ծառայության մատուցման ընթացիկ ամսվա փաստացի օրերի համար հաշվարկված գումարը՝ համաձայն տվյալ պահին գործող սակագների:

6.5. Եթե ծառայության դիմաց վճարման ենթակա գումարը հաշվարկվելու է ծառայության հիմնական չափորոշիչ ցուցանիշի նկատմամբ տոկոսով արտահայտված սակագնով և ծառայության հիմնական չափորոշիչ ցուցանիշի արժեքը արտահայտված է արտարժույթով, ապա այդ ցուցանիշի արժեքը վերահաշվարկվում է տվյալ օրվա դրությամբ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի կողմից ՀՀ դրամի նկատմամբ սահմանված արտարժույթի հաշվարկային փոխարժեքով, որի նկատմամբ հաշվարկվում է համապատասխան տոկոսը:

6.6. Սակագներում ԱԱՀ ներառված չէ բոլոր այն վճարների համար, որոնք ենթակա են ԱԱՀ-ով հարկման:

6.7. Սահմանված ժամկետներում չվճարվելու դեպքում Սակագները անակցեպտ կարգով գանձվում են Բանկում հաճախորդի հաշիվներից՝ համաձայն վերջինիս հետ կնքված պայմանագրի:

6.8. Թողարկողի ՀՀ դրամային հաշվին գանձման համար անհրաժեշտ դրամական միջոցների կամ դրա մի մասի բացակայության դեպքում միջնորդավճարը գանձվում է թողարկողի՝ Բանկում սպասարկվող այլ հաշիվներից՝ հիմք ընդունելով գանձման օրվա դրությամբ Բանկի սահմանած տվյալ արտարժույթի առքի փոխարժեքը:

6.9. Բանկի կողմից գանձված Սակագները վերադարձման ենթակա չեն՝ բացառությամբ այն դեպքերի, երբ վերջիններս գանձվել են սխալմամբ:

6.10. Թողարկողի կողմից սույն իրավական ակտով սահմանված ժամկետներում նախատեսված վճարները 3 /երեք/ ամիս անընդմեջ չկատարման, ուշացման կամ մասամբ կատարման դեպքում Բանկը տվյալ թողարկողի նկատմամբ հաշվարկում է տույժ՝ սկսած 4-րդ ամսից, ուշացման յուրաքանչյուր ամսվա համար՝ 5,000 /հինգ հազար/ ՀՀ դրամի չափով:

6.11. Բանկն իրավունք ունի կասեցնել Սակագներով նախատեսված ծառայությունների մատուցումը՝ իր միջնորդությամբ ռեեստրի վարման պայմանագիր կնքած և իր կողմից սպասարկվող թողարկողներին, եթե վերջիններս Բանկի նկատմամբ ունեն ծառայությունների դիմաց 3 /երեք/ ամսից ավել կատարման ենթակա վճարներ:

6.12. Բանկն իրավունք ունի վերսկսել թողարկողին ծառայությունների մատուցումը, այդ թվում վերակնքել ռեեստրի վարման պայմանագիրը դեռևս այն չվերակնքած թողարկողների հետ՝ հետևյալ դեպքերում.

6.12.1. սույն կետով սահմանված բանաձևի համաձայն հաշվարկված՝ ռեեստրի վարման պայմանագրի վերսկսման համար նախատեսված վճարը (Գ1) ամբողջությամբ ՀԿԴ-ին՝ անմիջականորեն, կամ Բանկի միջնորդությամբ վճարելուց հետո, այն դեպքում, եթե ռեեստրի վարման պայմանագիրը դեռևս վերակնքված չէ:

$$Գ_1 = ԺՊ + ՊՎՎ$$

Որտեղ՝

ԺՊ - կասեցման օրվա դրությամբ ժամկետանց պարտավորության ամբողջ մայր գումար + հաշվարկված տույժ կետանցման յուրաքանչյուր օրվա համար

ՊՎՎ - պայմանագրի վերսկսման վճար, որը հաշվարկվում է **ՀԴ*Օ/365**

Օ - կասեցման օրերի քանակ

ՀԴ - հիմնական դրույքաչափ, որը կազմում է՝

ա) 80,000 /ութսուն հազար/ ՀՀ դրամ, եթե տվյալ արժեթղթի սեփականատերերի (անվանատերերի) ռեեստրում գրանցված հաշվետերերի քանակը կազմում է 1-ից մինչև 99,

բ) 160,000 /մեկ հարյուր վաթսուն հազար/ ՀՀ դրամ, եթե տվյալ արժեթղթի սեփականատերերի (անվանատերերի) ռեեստրում գրանցված հաշվետերերի քանակը կազմում է 100-ից մինչև 499,

գ) 300,000 /երեք հարյուր հազար/ ՀՀ դրամ, եթե տվյալ արժեթղթի սեփականատերերի (անվանատերերի) ռեեստրում գրանցված հաշվետերերի քանակը կազմում է 500 և ավելի:

Ընդ որում՝ ռեեստրի վարման պայմանագիրը Բանկի միջնորդությամբ դեռևս չվերակնքած թողարկողների նկատմամբ հաշվարկվող ՊՎՎ-ի առավելագույն գումարը չի կարող գերազանցել սույն կետի ա) ենթակետում նշված դրույքաչափով հաշվարկման դեպքում՝ 150,000 /մեկ հարյուր հիսուն հազար/ ՀՀ դրամը, բ) ենթակետում նշված դրույքաչափով հաշվարկման դեպքում՝ 300,000 /երեք հարյուր հազար/ ՀՀ դրամը, գ) ենթակետում նշված դրույքաչափով հաշվարկման դեպքում՝ 550,000 /հինգ հարյուր հիսուն հազար/ ՀՀ դրամը:

6.12.2. սույն կետով սահմանված բանաձևի համաձայն հաշվարկված ռեեստրի վարման պայմանագրի վերսկսման համար նախատեսված վճարը (Գ2) Բանկին վճարելուց հետո՝ այն դեպքում, եթե ռեեստրի վարման պայմանագիրը վերակնքված է Բանկի կողմից:

$$Գ_2 = ԺՊ + ՊՎՎ$$

Որտեղ՝

ԺՊ - կասեցման օրվա դրությամբ ժամկետանց պարտավորության ամբողջ մայր գումարը + հաշվարկված տույժ կետանցման յուրաքանչյուր օրվա համար

ՊՎՎ - պայմանագրի վերսկսման վճար, որը հաշվարկվում է **ՀԴ*Օ/365**

Օ - կասեցման օրերի քանակ

ՀԴ - հիմնական դրույքաչափ, որը հաշվարկվում է **6.12.1** կետի ա), բ), գ) ենթակետերում նշված հիմնական դրույքաչափերին ավելացնելով համապատասխանաբար 20,000 /քսան հազար/ ՀՀ դրամ, 40,000 /քառասուն հազար/ ՀՀ դրամ և 50,000 /հիսուն հազար/ ՀՀ դրամ:

6.12.3. Սակագների **6.12.1** և **6.12.2** ենթակետերով վճարման ենթակա գումարի մասնակի վճարման դեպքում առաջին հերթին մարման են ենթակա ժամկետանց պարտավորությունների գումարը (ԺՊ), այնուհետև՝ պայմանագրի վերսկսման վճարը (ՊՎՎ):

6.13. Բանկը կարող է գործող Սակագներում կատարել փոփոխություններ և լրացումներ, որոնց մասին Բանկը ծանուցում է թողարկողներին՝ փոփոխությունների և լրացումների տեքստը Բանկի տարածքում կամ Բանկի ինտերնետային կայքում հասանելի դարձնելու միջոցով: Փոփոխությունները և լրացումներն ուժի մեջ են մտնում Բանկի Տնօրինության կողմից սահմանված ժամկետներում, բայց դրանց մասին հաճախորդներին պատշաճ կերպով ծանուցելու օրվանից ոչ շուտ:

7. «ԿՈՆՎԵՐՍ ԲԱՆԿ» ՓԲԸ ՄԻՋՆՈՐԴՈՒԹՅԱՄԲ ՌԵԵՍՏՐԻ ՎԱՐՄԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ ՍԱԿԱԳՆԵՐ

N	Ծառայության տեսակը	Միավորը	Սակագինը հաշվետեր հաճախորդների համար		Սակագինը ոչ հաշվետեր հաճախորդների համար
1	Թողարկողի վերաբերյալ տվյալների գրանցում ծրագրային Համակարգում	-	Անվճար		Անվճար
2	Թողարկողի արժեթղթերի վերաբերյալ տվյալների մուտքագրում ծրագրային Համակարգում	-	Անվճար		Անվճար
3	Բաժնային արժեթղթերի, մասնակցության վկայագրերի, փայերի հաշվառում (սեփականատերերի (անվանատերերի) ռեեստրի վարում և պահպանում)	Արժեթղթերի յուրաքանչյուր դասի համար՝ տեղաբաշխված արժեթղթերի (փայերի) հաշիվների քանակ (ամսական)	**Ամսական**	**Տեղաբաշխված արժեթղթերի (փայերի) հաշիվների քանակ**	**Ամսական**
			6,000 ՀՀ դրամ	1 - 49	8,000 ՀՀ դրամ
			8,000 ՀՀ դրամ	50 - 99	10,000 ՀՀ դրամ
			12,000 ՀՀ դրամ	100 - 199	14,000 ՀՀ դրամ
			18,000 ՀՀ դրամ	200 - 499	20,000 ՀՀ դրամ
			25,000 ՀՀ դրամ	500 - 999	32,000 ՀՀ դրամ
			42,000 ՀՀ դրամ	1,000 -1,999	62,000 ՀՀ դրամ
			72,000 ՀՀ դրամ	2,000 և ավելի	92,000 ՀՀ դրամ
4	Պարտատոմսերի հաշվառում (պարտատոմսերի սեփականատերերի (անվանատերերի) ռեեստրի վարում և պահպանում)	Տեղաբաշխված պարտատոմսերի յուրաքանչյուր դասի համար ընդհանուր անվանական արժեք (ամսական)	**Ամսական** 0.004% նվազագույնը՝ 5,000 ՀՀ դրամ առավելագույնը՝ 45,000 ՀՀ դրամ		**Ամսական** 0.004% նվազագույնը՝ 5,000 ՀՀ դրամ առավելագույնը՝ 45,000 ՀՀ դրամ
5	Հաշվի օպերատորի փոփոխության հետևանքով ռեեստրի վարման պայմանագրի վերակնքում	մեկ փոխանցում	6,000 ՀՀ դրամ		6,000 ՀՀ դրամ
6	Տեղաբաշխված բաժնետոմսերի (փայերի) գրանցման հաշվառում	Տեղաբաշխված բաժնետոմսերի (փայերի) ընդհանուր անվանական արժեք (փայերի դեպքում՝ փայերի շուկայական արժեքը)	0,1% նվազագույնը՝ 20,000 ՀՀ դրամ առավելագույնը՝ 2,500,000 ՀՀ դրամ		0,2% նվազագույնը՝ 30,000 ՀՀ դրամ առավելագույնը՝ 3,000,000 ՀՀ դրամ

7	Տեղաբաշխված պարտատոմսերի գրանցման հաշվառում	Տեղաբաշխված պարտատոմսերի ընդհանուր անվանական արժեք		0,0075% նվազագույնը՝ 30,000 ՀՀ դրամ առավելագույնը՝ 2,250,000 ՀՀ դրամ	0.01%, նվազագույնը՝ 30,000 ՀՀ դրամ առավելագույնը՝ 3,000,000 ՀՀ դրամ
8	Հրապարակային առաջարկի միջոցով տեղաբաշխված բաժնետոմսերի (փայերի) գրանցման հաշվառում	Տեղաբաշխվող բաժնետոմսերի (փայերի) ընդհանուր անվանական արժեք		0.08% նվազագույնը՝ 20,000 ՀՀ դրամ առավելագույնը՝ 1,000,000 ՀՀ դրամ	0.08% նվազագույնը՝ 30,000 ՀՀ դրամ առավելագույնը ՝1,000,000 ՀՀ դրամ
9	Հրապարակային առաջարկի միջոցով տեղաբաշխված պարտատոմսերի գրանցման հաշվառում	Տեղաբաշխվող պարտատոմսերի ընդհանուր անվանական արժեք		0.0075% նվազագույնը՝ 30,000 ՀՀ դրամ առավելագույնը՝ 400,000 ՀՀ դրամ	0.01% նվազագույնը՝ 30,000 ՀՀ դրամ առավելագույնը՝ 400,000 ՀՀ դրամ
10	Կորպորատիվ գործողության գրանցման հաշվառում (բացառությամբ կարգավորվող շուկայում առևտրին թույլատրված պարտատոմսերի)	Կորպորատիվ գործողության առարկա արժեթղթերի (փայերի) ընդհանուր անվանական արժեք (հաշվարկային արժեքը)		0.06% նվազագույնը՝ 20,000 ՀՀ դրամ առավելագույնը՝ 3,000,000 ՀՀ դրամ	0.1% նվազագույնը՝ 30,000 ՀՀ դրամ առավելագույնը՝ 3,000,000 ՀՀ դրամ
11	Կարգավորվող շուկայում առևտրին թույլատրված պարտատոմսերի կորպորատիվ գործողության գրանցման հաշվառում	Կորպորատիվ գործողության առարկա՝ կարգավորվող շուկայում առևտրին թույլատրված պարտատոմսերի (բացառությամբ՝ պետական կամ համայնքային պարտատոմսերի) ընդհանուր անվանական ծավալ		0,01% նվազագույնը՝ 5,000 ՀՀ դրամ առավելագույնը՝ 250,000 ՀՀ դրամ	0,02% նվազագույնը՝ 10,000 ՀՀ դրամ առավելագույնը՝ 300,000 ՀՀ դրամ
12	Թողարկողի արժեթղթերի հաշվի բացում (փակում)	հաշիվ		Անվճար	Անվճար
13	Արժեթղթերի (փայերի) գրանցված սեփականատերերի (անվանատերերի) ցուցակի տրամադրում	ցուցակ	հայերեն	1,000 ՀՀ դրամ	3,000 ՀՀ դրամ
			ռուսերեն կամ անգլերեն	Ցուցակի տրամադրման արժեքը մինչև 15 բաժնետիրոջ (փայատեր) դեպքում սահմանվում է 5,000 ՀՀ դրամ, իսկ յուրաքանչյուր հավելյալ 15 բաժնետիրոջ (փայատիրոջ) դեպքում՝ լրացուցիչ 2,500 ՀՀ դրամ	Ցուցակի տրամադրման արժեքը մինչև 15 բաժնետիրոջ (փայատեր) դեպքում սահմանվում է հայերենի լեզվի համար սահմանված արժեքի կրկնապատիկը, իսկ յուրաքանչյուր հավելյալ 15 բաժնետիրոջ (փայատիրոջ) դեպքում՝ լրացուցիչ 3,000 ՀՀ դրամ
14	Արժեթղթերով (փայերով) կատարված գործառնությունների՝ շարժի (արժեթղթերի փոխանցում) վերաբերյալ տեղեկանքի (առանց հիմքերի) տրամադրում	մեկ տեղեկանքը	հայերեն	10,000 ՀՀ դրամ	12,000 ՀՀ դրամ
			ռուսերեն կամ անգլերեն	Տեղեկանքի տրամադրման արժեքը սահմանվում է հայերեն լեզվի համար սահմանված արժեքի կրկնապատիկը	
15	Այլ տեղեկությունների (բացառությամբ արժեթղթերի (փայերի) փոխանցման) վերաբերյալ	մեկ տեղեկանքը	հայերեն	15,000 ՀՀ դրամ - էլեկտրոնային 20,000 ՀՀ դրամ - թղթային	20,000 ՀՀ դրամ - էլեկտրոնային 25,000 ՀՀ դրամ - թղթային

	տեղեկանքի տրամադրում (հիմքերով)		ռուսերեն կամ անգլերեն	Տեղեկանքի տրամադրման արժեքը սահմանվում է հայերեն լեզվի համար սահմանված արժեքի կրկնապատիկը	
16	Թողարկողի մասին տվյալների փոփոխությունների մուտքագում համակարգում	-		Անվճար	3,000 ՀՀ դրամ
17	Շահութաբաժինների հաշվարկում և վճարում	Շահութաբաժինների վճարման համար նախատեսված ֆոնդի ընդհանուր գումար (յուրաքանչյուր գործընթացի համար)		0,2% նվազագույնը՝ 30,000 ՀՀ դրամ	0,3% նվազագույնը՝ 40,000 ՀՀ դրամ
18	Պարտատոմսերի արժեկտրոնների վճարման կամ մարման արդյունքում դրամական միջոցների բաշխում	Վճարված/բաշխված դրամական միջոցների գումարը/յուրաքանչյուր գործընթացի համար		0,2% նվազագույնը՝ 30,000 ՀՀ դրամ	0,3% նվազագույնը՝ 40,000 ՀՀ դրամ
19	Ծանուցում թողարկողին՝ արժեթղթերի (փայերի) գործառնությունների մասին (արժեթղթերի (փայերի) փոխանցման հանձնարարականների և արժեթղթերի նկատմամբ իրավունքների սահմանափակումների վերաբերյալ)	-		**Տարեկան** 200,000 ՀՀ դրամ	**Տարեկան** 300,000 ՀՀ դրամ
20	Թողարկողին օրենքով և իր կանոնադրությամբ սահմանված արժեթղթերի ձեռքբերման և այլ սահմանափակումների նկատմամբ հսկողության իրականացում	-		**Տարեկան** 600,000 ՀՀ դրամ	**Տարեկան** 750,000 ՀՀ դրամ